ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2021 թվականի № Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի №26Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնատար անձանց և ստորաբաժանումներին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների և դրանց շահագործման համար անհրաժեշտ վառելիքի սահմանաքանակները սահմանելու մասին» N26Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Որոշման 1.1 կետի 1-ին ենթակետում «տնտեսական բաժինը» բառերից առաջ լրացնել «գործերի կառավարման վարչության գնումների և» բառերը, «բաժնի» բառից առաջ լրացնել «հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման» բառերը.

2) Որոշման 1.1 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով.

«4) սույն որոշմամբ հաստատված հավելվածում նշված պաշտոնատար անձանց (բացառությամբ՝ Հանձնաժողովի նախագահի) և ստորաբաժանումներին սպասարկող ծառայողական ավտոմեքենաները կարող են շահագործվել նաև

Հանձնաժողովի գործառույթների շրջանակում այլ աշխատանքների իրականացման համար:».

3) Որոշմամբ հաստատված հավելվածում «2 880» թիվը փոխարինել «3 360» թվով, «960» թիվը՝ «1 920» թվով, «23 520» թիվը՝ «24 960» թվով, «հերթապահ ավտոմեքենա» բառերը՝ «գործերի կառավարման վարչություն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
հոկտեմբեր 2021թ.